

## ՈՍՏ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՎԱԾՈՒԹՅԱՆ ԶԱՂԱԶԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՓՈՐՁ

### Գ. Մ. ԶԵՆՅԱՆ

Քաղաքական կուսակցությունների դասակարգման առաջնային չափանիշներից մեկը սոցիալական կողմնորոշվածության սկզբունքն է: Ընդհատ է, ժամանակակից կուսակցությունները, ենթարկվելով քաղաքական պայքարի նոր կանոններին, խուսափում են կապվել որոշակի դասակարգի կամ խավի հետ, որպեսզի հնարավորինս ընդլայնեն իրենց ընտրազանգվածը, բայց, այնուամենայնիվ, նրանք մնում են սոցիալական կազմավորումներ, և նրանց կարևորագույն գործառույթներից մեկը մնում է սոցիալական ներկայացուցչությունը, որի բովանդակությունը սոցիալական ուժերի ինտեգրացումը և դրանց շահերի բացահայտումը, ձևակերպումը և հիմնավորումն է: Չմոռանանք, որ սոցիալական հակամարտությունը, որպես կանոն, ձեռք է բերում քաղաքական բնույթ և ներթափանցում քաղաքական կյանքի բոլոր ոլորտները՝ հանդիսանալով կուսակցությունների ծագման աղբյուրներից մեկը: Հասարակության սոցիալական շերտավորվածությունը պահպանվում է և սոցիալապես միասեռ հասարակության մասին պատկերացումները դեռևս մնում են մարդկության անհասանելի երազանք: Բնականաբար, ինչպես քաղաքական համակարգի մյուս բոլոր սուբյեկտները, այնպես էլ կուսակցությունները դեռ կրում են սոցիալական գործոնի ակնհայտ ազդեցությունը: Նշենք հաև, որ մի շարք երկրներում դեռևս պահպանվում է միջկուսակցական պայքարի «հեմոգեն մրցակցություն» ձևը, երբ յուրաքանչյուր կուսակցություն հենվում է միայն իր ընտրազանգվածի վրա և առավելագույնս պաշտպանում է որոշակի խավի շահերը: Արտահայտելով այս կամ այն սոցիալական շերտի կամ խմբի շահերը՝ կուսակցությունները ի մի են բերում դրանք՝ հանգեցնելով այնպիսի ձևերի, որոնք անմիջական ազդեցություն են գործում պետական մարմինների որոշումների վրա:

Վ. Վեելովսկին իրավացիորեն նշում է, որ ժամանակակից հասարակությունների սոցիալական կառուցվածքը բավականին բարդ է: Եթե 17-ից մինչև 20-րդ դարասկիզբ ընկած ժամանակահատվածում հեշտությամբ կարելի է առանձնացնել հիմնական դասակարգերը (ազնվականություն, բուրժուազիա, բանվորներ, գյուղացիություն), ապա ներկայումս դա բավականին դժվար խնդիր է: Նախորդ դարաշրջանների համար օգտագործելով «ազնվականական կուսակցություն», «բուրժուական կուսակցություն», «բանվորական կուսակցություն», «գյուղացիական կուսակցություն» հասկացությունները՝ կարող ենք նշել տվյալ հասարակական-տնտեսական ֆորմացիայի հիմնական դասակարգերի շահերն արտահայտող կուսակցությունները: Սակայն նման անվանումներով հնարավոր չէ արդի կուսակցությունների սոցիալական տիպը բնութագրել: Պատճառը ներդասակարգային շերտավորման խորքային գործընթացներն են, որոնք ուղեկցում են հասարակությանը 20-րդ դարի կեսերից սկսած և պայմանավորված են գիտատեխնիկական մեծ առաջընթացով, ազատ շուկայական հարաբերությունների նոր ձևերի առաջացմամբ և այլն: Հիմնական դասակարգերի կողքին առաջ են գալիս նոր սոցիալական խավեր, որոնք կազմում են ընտրազանգվածի առավել մեծ մասը և համապատասխանաբար ավելի մեծ կշիռ են ձեռք բերում հասարակական-քաղաքական կյանքում: Այդպիսի սոցիալական շերտերից են մանր

<sup>1</sup> Տե՛ս В. Весоловский, *Классы, слои и власть*, М., 1981:

ու միջին սեփականատերերը կամ, այսպես կոչված, «միջին խավը»՝ գիտատեխնիկական մտավորականությունը, բյուրոկրատիան և պետական ծառայողները, սպասարկման ոլորտի աշխատողները և այլն: Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ ոչ բոլոր երկրներն են գտնվում նույն մակարդակի վրա: Տնտեսական զարգացման աստիճանը, ազգային առանձնահատկությունները, պատմական պայմանների ոչ միօրինակությունն ու բազմաթիվ այլ գործոններ էապես ազդում են յուրաքանչյուր երկրի հասարակության սոցիալական կառուցվածքի և, բնականաբար, նաև քաղաքական կուսակցությունների սոցիալական տիպերի վրա: Կան երկրներ, որտեղ ղեկն պահպանվում են նախորդ դարաշրջաններից եկող սոցիալ-դասակարգային խմբեր, որոնց պայմանականորեն անվանում են մնացուկային կամ վերապրուկային դասակարգեր: Այդպիսին են, օրինակ, կալվածատերերը շուկայական տնտեսության պայմաններում և ղեկն իր տիրոջն են ու կոչումները պահպանած ազնվականությունը, որոնք միապետական ինստիտուտների պահպանման պարագայում (Մեծ Բրիտանիա, Ճապոնիա, Իսպանիա, Սկանդինավյան երկրներ և այլն), պահպանում են նաև քաղաքական կյանքի վրա ներգործելու իրենց լծակները: Օրինակ՝ Բրիտանական պառլամենտի վերին՝ Լորդերի պալատը ոչ թե ընտրովի է, այլ կազմվում է աշխարհիկ և հոգևոր լորդերից, որոնք իրենց ձեռքում են պահում նաև երկկուսակցական համակարգի երկու սուբյեկտներից մեկի՝ Պահպանողական կուսակցության ղեկավարությունը՝:

Որոշակի բարդ, ճգնաժամային ու անկուսակցային քաղաքական-տնտեսական իրավիճակներում գտնվող հասարակության ստվար հատվածներ կարող են զրկվել սոցիալական այս կամ այն խմբին պատկանելիությունից և միախառնվել արդեն ապադասակարգայնացված կացության մեջ գտնվող խավերի (օրինակ՝ լյուսպեն պրոլետարիատի) հետ: Նման իրադրության մեջ գերակայություն են ձեռք բերում հասարակության ապադասակարգայնացած կամ, այսպես կոչված, մարգինալ՝ հատվածները, որոնք դառնում են նոր տիպի քաղաքական կուսակցությունների առաջացման ու արագ վերընթացի հիմքը: Կուսակցությունների սոցիալական բնույթի վրա ազդում են նաև հասարակությանը հուզող այս կամ այն հարցի շուրջ առաջացած միջդասակարգային-միջսոցիալական կոմպրոմիսները: Օրինակ՝ ավտորիտար-դիկտատորական վարչակարգի դեմ պայքարող կուսակցությունը կարող է հենվել միանգամից սոցիալական մի քանի, նույնիսկ հակադիր շահեր ունեցող շերտերի վրա, և այս դեպքում կուսակցության սոցիալական տիպը դառնում է բազմադեմ և արտահայտում է միայն այդ կոմպրոմիսը:

Վերն ասվածից ելնելով՝ նպատակահարմար ենք գտնում ըստ սոցիալ-դասակարգային կողմնորոշվածության առանձնացնել քաղաքական կուսակցությունների հետևյալ տիպերը.

- հասարակական-տնտեսական ֆորմացիայի հիմնական դասակարգերի շահերն արտահայտող կուսակցություններ (ազնվականական, բուրժուական, բանվորական, գյուղացիական).

- միջանկյալ դասակարգերի կամ հիմնական դասակարգերի շերտավորումից առաջացած խավերի շահերն արտահայտող կուսակցություններ,

- վերապրուկային դասակարգերի ու սոցիալական խավերի կուսակցություններ,

- ապադասակարգայնացած (մարգինալ) սոցիալական խմբերի վրա հենվող կուսակցություններ.

- սոցիալական կայուն շերտերին ներկայացնող կուսակցություններ (մտավորականություն, ինժեներատեխնիկական աշխատողներ, զինվորականություն, պետական բյուրոկրատիա).

՝ Տե՛ս Դև. Դոլլան, *Политическая система Великобритании*, М., 1955; Կ. Գ. Բедер և Դր., *Политическая система Великобритании*, М., 1984:

՝ Որև «marginальные», լատ. «marginalis» բառը «հատուկան, սահմանագծի վրա գտնվող» իմաստն ունի:

- վերդասակարգային սոցիալական կազմավորումների վրա հենվող կուսակցություններ, որոնք առաջանում են քաղաքական շահերի ու նպատակների փոխզիջման ընդհանուր դաշտի կայացման և սոցիալական տարբեր ուժերի կոմպրոմիսի դեպքում,

- ձևավորված կամ անորոշ սոցիալական կողմնորոշվածությամբ կուսակցություններ:

Կուսակցությունների սոցիալական բնույթի ու տիպի բնութագրման համար սոցիալ-դասակարգային չափանիշից բացի անհրաժեշտ է կիրառել նաև սոցիալական միջավայրի չափանիշը, որովհետև որոշակի դասակարգի շահերի ներկայացուցչությունը չի նշանակում, թե այդօրինակ կուսակցությունն իր գործունեությունը սահմանափակում է միայն տվյալ միջավայրում: Այս չափանիշից ելնելով՝ կուսակցությունները բաժանվում են երեք հիմնական տիպերի.

1. **Միամիջավայրային** - գործում է միայն այն սոցիալական միջավայրում, որի շահերը ներկայացնում է քաղաքականության ոլորտում,

2. **համընդհանրական կամ ունիվերսալ** - կողմնորոշված է դեպի համաժողովրդական և ընդհանուր սոցիալական միջավայրը, ձգտում է աջակցություն ստանալ որքան հնարավոր է սոցիալական ավելի շատ շերտերից,

3. **անցումային** - իր գործունեությունը կենտրոնացնում է առաջին հերթին մեկ միջավայրում, բայց ծավալում է նաև սոցիալական այլ հարությունների աջակցությունն ստանալու և նրանց վրա ազդելու գործունեություն:

Պետք է նշել, որ ներկայիս դեմոկրատական վարչակարգերում գործելու հնարավորություն ունեցող կուսակցությունների մեծ մասը պատկանում է համընդհանրական կամ անցումային տիպերին: Այս տիպերին են ձգտում ազգային-ազատագրական շարժումները դեկավարող կուսակցությունները, որոնց համար առաջնայինը համազգային աջակցությունն է, ինչպես նաև անցումային հասարակությունների կուսակցությունները:

Անցումային հասարակությունների պայմաններում, որպես կանոն, արագորեն առաջանում են մեծ թվով կուսակցություններ, որոնք գաղափարապես քիչ են տարբերվում մեկը մյուսից, ուստի չունենալով հստակ սոցիալական կողմնորոշվածություն՝ աշխատում են դեռևս նոր ձևավորվող բազմակուսակցական համակարգերում առաջինն ստանձնել հեգեմոնի դերը՝ Այդ նպատակով նրանք ստիպված են փնտրել և նվաճել զանազան սոցիալական շարժումների, քաղաքացիական նախաձեռնությունները կրող հասարակական կազմակերպությունների և հատկապես արհմիությունների և բնապահպանների աջակցությունը<sup>5</sup>, որն արդեն ինքնին թելադրում է կուսակցությունների՝ գործունեություն ծավալելու համընդհանրական սոցիալական միջավայրում:

Քաղաքական կուսակցությունների տիպերն ըստ սոցիալական միջավայրի բնութագրելու համար որոշ քաղաքագետներ կիրառում են այլ տերմիններ: Օրինակ՝ Ե. Վ. Անիսիմովը չի նշում անցումային տիպը, իսկ համընդհանրական կամ ունիվերսալ կուսակցությունները որակում է որպես ինտեգրատիվ: Վերջապես, միամիջավայրային կուսակցությունները նա անվանում է ներկայացուցչական, որը միայն մեկ դասակարգ կամ սոցիալական շերտ է ներկայացնում<sup>6</sup>:

**Կուսակցությունների սոցիալական կողմնորոշվածության փոփոխություններն ընտրությունների արդյունքների, քաղաքական դաշտի վերաձևման և նույնիսկ կուսակցական համակարգի ձևավորման վրա վճռորոշ ազդեցություն են ունենում:**

<sup>4</sup> St'u Ю. Б. Прозоров, Партии в переходных обществах (латиноамериканский опыт), «Полис», 1994, No 4; В. И. Тимошенко, Российская многопартийность сегодня, «Социально-политический журнал», 1994, No 11-12, էջ 26:

<sup>5</sup> St'u О. Н. Яницкий, Экологическая политика: роль движений и гражданских инициатив, «Социс», 1994, No 10:

<sup>6</sup> St'u Е. В. Анисимов, Политические партии и партийные системы. В кн.: «Политология», М., 1999, էջ 184:

Դրա ցայտուն օրինակը Մեծ Բրիտանիայի երկկուսակցական համակարգում տեղի ունեցած տեղաշարժերն են 1920-30-ական թթ.: Մինչև 19-րդ դարի 90-ական թթ. երկու հիմնական Պահպանողական և Լիբերալ կուսակցություններն ըստ սոցիալական միջավայրի հանդիսանում էին անցումային կուսակցություններ: Պահպանողականները՝ որպես նախկին ազնվականական-միապետական Տորիների կուսակցության ամփոփական քաղաքական ժառանգորդ, ավանդաբար և ինտրոցիայի ուժով ներկայացնում էին ազնվականության ու նրանց հետ կապված սոցիալական ոչ մեծաքանակ շերտերի շահերը: Դրա հետ մեկտեղ՝ պահպանողականները ձգտում էին մերձենալ անգլիական բուրժուազիայի և հատկապես խոշոր բուրժուազիայի հետ՝ այդ կերպ ընդլայնելով կուսակցության սոցիալական հենարանը: Միևնույն ժամանակ Լիբերալ կուսակցությունը, որը վիզերի քաղաքական ժառանգորդն էր և անգլիական բուրժուազիայի հիմնական կուսակցությունը, ձգտում էր իր ազդեցության ոլորտում պահել աշխատավորական խավերը և հատկապես բանվորներին: Սակայն 19-րդ դարի 90-ական թթ. և 20-րդ դարի սկզբներին փոխելով իր սոցիալական բնույթը և անցում կատարելով դեպի համընդհանրական-ունիվերսալ տիպը՝ Պահպանողական կուսակցությունը շոշափելի հաջողությունների է հասնում: Նշված տասնամյակներին, երբ կուսակցությունը ղեկավարում էին Սոլսբերին (1881-1902թթ.) և Բալֆուրը (1902-1911թթ.), այն դարձավ բրիտանական բուրժուազիայի հիմնական քաղաքական կուսակցությունը: Այս ժամանակաշրջանում և հատկապես առաջին աշխարհամարտի տարիներին, Լիբերալ կուսակցությունը լքելով, Պահպանողական կուսակցության կողմն անցան արդյունաբերական բուրժուազիայի խոշոր խմբավորումները: Լիբերալների թուլացումը և քաղաքական ազդեցության անկումը ուներ նաև երկրորդ պատճառը: Դա Լեյբորիստական կուսակցության կազմավորումն էր (1900 թ.) և նրա սրընթաց մուտքը քաղաքական ասպարեզ: Նվաճելով աշխատավորական խավերի համակրանքը՝ նրանք 1921-22թթ. դարձան ամենախոշոր ընդդիմադիր կուսակցությունը և վերածվեցին ինքնուրույն քաղաքական ուժի: Այսպիսով, լիբերալները զրկվեցին նաև աշխատավորական խավերի աջակցությունից, որոնք սկսեցին քվեարկել արդեն մեծ մասամբ Լեյբորիստների օգտին: Ի վերջո Լիբերալ կուսակցությունը 20-ական թթ. դուրս մղվեց երկկուսակցական համակարգից՝ իր տեղը զիջելով Լեյբորիստական կուսակցությանը<sup>7</sup>:

Այսպիսով, կուսակցությունների սոցիալական բնույթի, սոցիալական կողմնորոշվածության և տիպի փոփոխությունը, փոխեց նաև քաղաքական դաշտը և վերածնեց կուսակցական համակարգը:

Պետք է նշել, որ սոցիալական նոր ընդհանրությունների վրա ազդեցությունն ցվածելը և անցումը դեպի համընդհանրական-ունիվերսալ տիպը հետպատերազմյան տասնամյակների ընթացքում գերիշխող միտում է կուսակցությունների զարգացման գործընթացներում: Բուրժուազիային, միջին ու մանր սեփականատերերին իրենցից չվանելու համար սոցիալիստական կուսակցությունները այլևս չեն դնում մասնավոր սեփականության վերացման խնդիրը: Օրինակ՝ Լեյբորիստական կուսակցությունը, որը ներկայումս գտնվում է իշխանության ղեկին, իր ներքին քաղաքականության մեջ առաջնորդվում է կապիտալիստական հասարակության կառուցվածքը պահպանելու անհրաժեշտության սկզբունքի վրա: Այս տեսակետից հատկանշանակ է ֆրանսիական սոցիալիստական կուսակցության օրինակը:

<sup>7</sup> Լեյբորիստական կուսակցության գործունեության մասին ավելի մանրամասն տե՛ս *Л. Е. Керман, Рабочее движение в Англии и борьба двух тенденций в лейбористской партии (1900-1914 гг.)*, Пермь, 1957; *Н. Ф. Мочульский, Кризис лейбористской партии 1931г.*, М., 1956; *И. Н. Ундасинов, Рабочее движение и лейбористская партия Великобритании в период мирового экономического кризиса*, М., 1961; *В. В. Печанский, Современное рабочее движение в Англии*, М., 1963; *Э. Бернс, Теория и практика правых лейбористов* (пер. с англ.), М., 1962; *Д. Н. Притт, Очерки внешней и внутренней политики лейбористов в 1945-1955гг.* (пер. с англ.), М., 1964:

1981 թ. Ֆրանսիայում սոցիալիստները իշխանության եկան՝ նպատակ ունենալով երկրում իրականացնել արմատական սոցիալ-տնտեսական և քաղաքական ռեֆորմներ: Նրանց ծրագրային փաստաթուղթը՝ «Սոցիալիստական նախագիծը», նախատեսում էր դեմոկրատական ճանապարհով վերջ դնել կապիտալիզմին, վերացնել շահագործումը և դասակարգերը, ստեղծել դասակարգային ճակատ և հիմնովին փոխել ժողովրդի կյանքը: Հետագայում կուսակցությունն աստիճանաբար փոխեց իր սոցիալական կողմնորոշվածությունը՝ այդ ձևով ձգտելով ընդլայնել իր ընտրազանգվածը: 1990 թ. ընդունվեց կուսակցության նոր, բարեփոխված ծրագիրը, որը, ի տարբերություն նախորդ՝ «Սոցիալիստական նախագծի», այլևս չուներ դասակարգային, հակակապիտալիստական և հեղափոխական երանգներ: Նոր ծրագրի հիմքում (այն կոչվեց «2000թ. նախագիծ») դրվեց ռեֆորմիզմը, որով սոցիալիստները արդեն նախապատվությունը տալիս էին շուկայական հարաբերություններով խառը տնտեսությանը: «2000 թ. նախագիծը» ընդունվեց 1991 թ. Փարիզի համագումարում, վերջնական տեսքի բերվեց և լրացվեց 1992 թ. Բորդոյի համագումարում<sup>6</sup>: Քաղաքական կուրսի նման կտրուկ փոփոխությունն զգալիորեն ուժեղացրեց ֆրանսիական սոցիալիստական կուսակցության ազդեցությունը սոցիալական այլ հանրությունների վրա, իսկ սա, բնականաբար, մեծացրեց մանր ու միջին սեփականատերերի սոցիալական խավերից նրա օգտին քվեարկողների թիվը: Ի դեպ՝ հետպատերազմյան տասնամյակների ընթացքում ճգնաժամից դուրս գալու և իշխանական կառույցներում իր ներկայացուցչությունը պահպանելու համար ֆրանսիական սոցիալիստական կուսակցությունը մի քանի անգամ դիմել է նման մանևրների և քաղաքական կուրսը աջ և ձախ տեղաշարժելու միջոցով փորձել է պահպանել իր ընտրազանգվածը<sup>7</sup>:

*Կուսակցությունների սոցիալական հենարանի ընդլայնման և «վերդասակարգային» իմիջի ձևավորման համար երբեմն վճռորոշ նշանակություն է ունենում հատկապես նրանց որդեգրած արտաքին քաղաքական կուրսը:* Այս հանգամանքը առավել հստակ երևում է Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության քաղաքական դաշտում մինչ Գերմանիայի միավորումը: Հետպատերազմյան Գերմանիայի ներքաղաքական կյանքը տնօրինում էր քաղաքական երեք ազդեցիկ կուսակցություն: Ձախ թևում գտնվում էր Գերմանիայի Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը (ԳՍԴԿ), աջ ուժերին առաջնորդում էր բուրժուական երկու կուսակցությունների՝ Բրիտտնեա-դեմոկրատական միության և Բրիտտնեա-սոցիալական միության դաշինքը (ԲԴՄ/ԲՍՄ), իսկ կենտրոնում, որպես միջանկյալ քաղաքական ուժ, հանդես էր գալիս Ազատ դեմոկրատական կուսակցությունը (ԱԴԿ): Ինքնուրույն կառավարություն կազմելու կարողություն և հնարավորություն ունեին միայն ԳՍԴԿ-ն և ԲԴՄ/ԲՍՄ դաշինքը:

Գերմանական կուսակցությունների սոցիալական հենարանների պարզ համեմատությունը ցույց է տալիս, որ առավել մեծ ընտրազանգված պետք է ունենար ԳՍԴԿ-ն: Սակայն այլ են ընտրությունների արդյունքները: 1949 թ.-ից մինչև 1998 թ.-ը, բացառությամբ 1969-83 թթ., ԲԴՄ/ԲՍՄ դաշինքը գտնվում էր իշխանության դեկին: Պատճառն այն էր, որ այս դաշինքը իր ներքին ու արտաքին քաղաքականության հիմնական գերխնդիրը հռչակել էր Գերմանիայի միավորումը: Այդ նպատակով ԲԴՄ/ԲՍՄ-ի կազմած կառավարությունները, հետմապերազմյան տարիներին սերտորեն համագործակցելով ՆԱՏՕ-ի երկրների հետ, վարում էին ԽՍՀՄ-ի և արևելա-եվրոպական երկրների դեմ ուղղված քաղաքականություն: Ընդհակառակը, սոցիալ-դեմոկրատներն առաջնային էին համարում լայնամասշտաբ միջոցառումները

<sup>6</sup> St'u Жан Шарло, Политические партии и системы политических партий во Франции, М., 1993, էջ 7:

<sup>7</sup> St'u "Очерки рабочего движения во Франции (1917-1967)", М., 1968; С. С. Саличев, Идеология и политика Французской социалистической партии (1944-1964), М., 1966; Е. М. Макаренко, Французская социалистическая партия в годы 4-ой республики, М., 1973; В. Н. Чернега, Буржуазные партии в политической системе Франции: Третья-пятая республики, М., 1987:

դեմոկրատական կարգերի ամրապնդման և աշխատավորության սոցիալական պահանջների բավարարման ուղղությամբ, որն իր արտացոլումը գտավ 1959 թ. Բադ-Գոդեսբերգի համագումարում ընդունված ծրագրում: Մինևույն ժամանակ կուսակցությունը մեծ ներդրում ունեցավ դեմոկրատիայի ամրապնդման, ուսանողական ուժերի դեմ մղվող պայքարում, սակայն վերամիավորման գաղափարը վեր էր ամեն ինչից: Որպես համազգային գաղափար՝ այն տալիս էր ԲԴՄ/ԲՍՄ-ին մեծ ընտրազանգված և սոցիալական բոլոր շերտերի վրա ուժեղ ազդեցություն էր ապահովում<sup>10</sup>:

Գերմանիայի միավորման գաղափարին հետամուտ լինելով՝ երկկուսակցական դաշինքը զգալիորեն ընդլայնեց իր ընտրազանգվածը՝ խլելով սոցիալ-դեմոկրատների ընտրողներին: Կրելով Գերմանիայի միավորման համար պայքարի առաջամարտիկի դափնեպսակը՝ ԲԴՄ/ԲՍՄ-ն համոզիչ հաղթանակներ տարավ նաև 1990 թ. համագերմանական առաջին<sup>11</sup> և 1994 թ. երկրորդ ընտրություններում:

Հետպատերազմյան տարիներին ԳՖՀ-ն կուսակցությունների պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մինչև 90-ական թթ. կեսերը ԳՖՀ-ի կուսակցությունների սոցիալական հենարանների ընդլայնման և կրճատման, սոցիալական հանրությունների վրա նրանց ազդեցության աճի ու անկման գործընթացները հիմնականում պայմանավորված են եղել արտաքին քաղաքական գործունեությամբ: Բուրժուա-կրոնական կուսակցությունները, առավել հաջող, քան սոցիալ-դեմոկրատները, օգտագործելով միավորման գաղափարը՝ իրենց գործունեությունը ծավալել են սոցիալական տարաբնույթ միջավայրերում:

Գերմանական օրինակը միակը չէ ժամանակակից քաղաքական պատմության մեջ: Նման գործընթացներ տեղի են ունեցել նաև այլ երկրներում: Սակայն բոլոր դեպքերում միտումը նույնն է՝ դառնալ բոլոր սոցիալական շերտերի կամ էլ հասարակության ամենաբազմամարդ դասակարգերի շահերի համակարգող ուժը և ձեռք բերել այն ներկայացնելու մենաշնորհը:

Սոցիալական տիպի փոփոխությունները կապված են սոցիալ-դասակարգային պատճենների վերացման և սոցիալական շերտերի մեծ շարժունակության առաջացման հետ: Լուրջ գործոն է նաև որոշակի համամարդկային-հումանիստական արժեքների շուրջ հասարակական բոլոր խավերի համախմբումը, որը երկրորդական պլան է մղում սոցիալ-դասակարգային շահը:

**Г. М. КЕРЯН - Попытка классификации политических партий по социальной ориентации.** - Социальная ориентация является одним из первостепенных критериев в деле классификации политических партий, так как они сохраняют функцию социального представительства. Если учесть социально-классовую сущность, то можно выделить партии, которые выражают интересы основных классов данной общественно-политической формации (дворянские, буржуазные, рабочие, крестьянские), промежуточных классов (средняя и мелкая буржуазия, фермеры, служащие, квалифицированные рабочие, торговцы и т.д.), реликтовых классов и слоев, деклассированных (маргинальных) слоев, стабильных социальных групп (государственная бюрократия, интеллигенция, военные и т.д.), надклассовых социальных образований (образуются в результате компромисса нескольких социально-политических сил). В современной политологии учитывается также та социальная среда, в которой партия развертывает свою деятельность. По этому критерию можно различить моносредовые, универсальные и промежуточные партии. Большинство политических партий в современных демократических обществах стремится выглядеть универсальными всенародными, чтобы расширить свой электорат во время выборов законодательных и исполнительных органов власти.

<sup>10</sup> Տե՛ս Մ. Ս. Восленский, Внешняя политика и партии ФРГ, М., 1961: ԳՄԿ-ի գործունեության մասին տե՛ս Н. А. Трунин, Милитаризация ФРГ и политика социал-демократической партии, М., 1962; Э. Глюкауф, Западнгерманская социал-демократия и коммунисты, ПМиС, 1964; В. Шумский, Политика без будущего, М., 1967:

<sup>11</sup> Արդյունքների մասին տե՛ս «Гутен Таг», № 1, 1991, էջ 1: